

1942	ՅՈՒՆՈՒԱՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ	ԹԻՒ 1-12	1942	Janvier - Décembre	N. 1-12
			SOMMAIRE		
			PAG.		
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ			ARTICLE DE FOND		
Հ. Մ. ձ. - Սպասում		1	P. M. Dj. - L'attente		1
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ			PHILOLOGIE		
Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ. - Դատաստանադիրք			P. V. Hatzouni. - Le Code de Mekhitar Koche		
Մխիթար Գոչի եւ հնագոյն օրինակները		4	et ses exemplaires les plus anciens		4
Հ. Ղ. Տայեան. - Պատասխան եր. Տէր			P. L. Dayan. - La question des reliques «attribuées»		
Կոմիտաս Վկայի «Կարծեցեալ» ծաւնոյ ծաւնին (շար.)		10	au bienheureux Gomidas: (Réponse à Mgr. Jean Nazlian), suite		10
Հ. Յ. Արգեր. - Առաքելական քարոզութիւնը Հայոց մէջ (վերջ)		19	P. J. Aucher. - La prédication Apostolique chez les Arméniens (fin)		19
Հ. Յ. Շախուրեան. - Եղնկացի Կիրակոս Վարդապետի թուղթը		52	P. J. Chakourian. - La lettre pastorale de Kikrakos Vart. d'Erzindjan (étude)		52
ԳԵՂԱՐՈՒԵՍԱԿԱՆ			BEAUX — ARTS		
Ճեղաքիքեան Ս. - Սիւնազարդ ծածկոյցի դրոշմներ եւ կամարակապ զարդասիւնները հայկ. ճարտարապետութեան մէջ (շար.)		35	Djévahirdjian S. - Le système des arcades et des portiques dans l'architecture arménienne (suite)		35
Հ. Մ. Ճանաչեան. - Հայ նշանաւոր նկարիչ՝ Գրիգոր Շիրիւեան		45	P. M. Djanachian. - Le celebre peintre arménien: Krikor Chiltian		45
ԳՐԱԿԱՆ			LITTERATURE		
Բարիքի ձիովանքի. - Բարունակաւ աւանդակալը (թրգմ. իտալերէնէ)		58	Papini Giovanni. - La legende du Grand Rabbin (trad. de l'italien)		58
Հ. Մ. Ճանաչեան. - Սիպիլ (Քերթումանեան Նոր հրատարակութեան առթիւ)		66	P. M. Djanachian. - La poétesse arménienne Sibil (à l'occasion d'une nouvelle publication de ses vers)		66
Հ. Մ. Ճանաչեան. - Ճաշակը «Բուրաստանք»-ին (թրգմ. աշխարհարար)		64	P. M. Djanachian. - Un morceau de la poésie didactique «Pourastank» de Mons Ed. Hurmuz (trad. en arm. moderne)		64
Սիւլի ֓րիւտով. - Անճրեւը (թրգմ. Ֆրանսերէնէ Հ. Մ. ձ.)		44	Sully-Prudhomme. - La pluie (trad. de franc. par le P. M. Dj.)		44
Հ. Արմաւիրեան. - Ձիւնը (Խորհրդածութիւն)		57	P. Armavirian. - La neige (Réflexion poétique)		57
Հ. Ա. - Մտածութիւն մը		83	P. A. - Une pensée		83
Ուսուցչ. Նիփոլա Եօրկա. - Թանկագին նըշխար մը		89	Prof. Nicola Jorga. - Une précieuse bribe (poésie dédiée à St. Lazare)		89
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ			BIOGRAPHIE		
Խմբ. - Քահանայական յիսնամեայ Յորելեան Վ. Հ. Վարդան Հայունի Վարդապետին		73	Réd. - Le Rév. P. Vartan Hatzouni (à l'occasion de son Jubilé Sacerdotal de 50 ans)		73
Հ. Ղ. Տ. - Հանդիստ հոգւոյ Հ. Արիստակէս Վ. Գասթանտիլեանի		90	P. L. D. - † La mort du P. Aristaghes Kas-kandilian		90
Խմբ. - Ալեմշահ Միքայէլ (ժահուան առթիւ)		92	Réd. - † La mort de Mr. Alemchah Michel		92
- Անարիկ Ալթունեան (ժահուան առթիւ)		94	- † La mort de Mr. Andrigh Altounian		94
- Արամ Ինճիճեան		95	- † La mort de Mr. Aram Indjidjian		95
ԳՐԱԽՕՍԱԿԱՆ			RECENSION		
Խմբ. - Ստացուած գրքեր		81	Réd. - Les livres reçus		81
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՁԱԳԱՆԳ			ECHOS ARMENIEN		
Հ. Մ. ձ. - Հայ սրբազան երաժշտութիւնը Հոռմի մէջ		78	P. M. Dj. - La musique sacrée arménienne à Rome		78
Խմբ. - Տօներ եւ հանդէսներ Ս. Ղազարու եւ Մ. - Ռ. Վարժաբանին մէջ		84	Réd. - Les descriptions des fêtes et des représentations à St. Lazare et au Collège arménien de Venise		84

1843-1942

Բ Ա Ջ Մ Ա Վ Է Պ

Հ Ա Ն Դ Ի Ս Ա Ր Ա Ն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ - ԳՐԱԿԱՆ - ԴԵՏԱԿԱՆ - ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՅՈՒՆՈՒԱՐ - ԴԵԿՏԵՄԲԵՐ ԹԻՒ 1-12

ՀԱՏ. Ճ. ՌԵՂԱ-ՌԵՂԱ

ՎԵՆԵՏԻԿ Ս. ՂԱԶԱՐ

Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

Ս Պ Ա Ս ՈՒ Մ

Ներկայ կեանքը, որ իր նակատագրական ցանցին մէջ առած մարդկութիւնը կը վանէ դէպի անյայտ ու մռայլ հորիզոններ, որ իրապէս դարձած է իր իսկական իմաստով պայքար՝ բնութեան, օդի եւ տարերային ամէն մասերու մէջ, մարդերու շուրջն ու ներսը, անոնց խորհուրդներուն եւ նիւթական միջոցներուն բախումովն իրարու հետ, պիտի ունենայ անտարակոյս իր վախճանը՝ ինչպէս ամէն ստեղծական կամ պատահական էութիւն, որ յաւերժութեան դրոշմ չի կրեր։ Անմահ՝ միայն հոգիներն են, եւ իմացական կամ հոգեղէն ուժի գերագոյն արտադրութիւնները։

Ու իմարդկութիւնը մեծ անձուկով կը սպասէ դէպքերու ելփին եւ վնասելիք որոշողութիւններուն, հաստատուելիք նոր կարգութարփին։

Թոյլատրուի սակայն մեզ հոս ըսել՝ թէ այս հուրի ու սուրի կատաղութեան ճիրաններուն մէջ ապրում կեանքը, ալետատան եւ բազմավրդով, հիւանդ մարդկութեան կեանքն իսկ է, որ բուժուելու պէտք ունի։ Ո՞վ չի գգար թէ այս տարաբախտ կացութիւնը, հաւասարապէս տարածուած աշխարհի չորս ծագերուն, անբնականոն վիճակ մըն է, մանաւանդ քաղաքակրթութեան ու գաղափարի այս դարուն։

Ահա այս չորրորդ տարին է որ պատերազմին մէջ ենք. աշխարհ բոնուած է երկունքի ցաւերով։ Տիտանական մեքենաներ, վառօդ եւ սուր մահ կը փոխեն քաղաքներու մէջ ու դաշտերու վրայ՝ հաւաստելու համար կարծես թէ կ'ապ-

«Բազմավէպ» Յունուար - Դեկտեմբեր 1942

2094-ԱԿ

884-73

քինք տակաւին այն նախնական շրջանին՝ որուն բնորոշիչ նկարագիրը կու տար Հոսսս իր «մարդ մարդու գայլ» բացատրութեամբ: Կիրք, շահու քաղաքականութիւն, նիւթական Ոյժ՝ գրաւած են ասպարէզը, ու մոռցուած են ընդհանրապէս հոգեկան ամէն արժէք եւ գորութիւն: Նման ահուելի ու հսկայական կռուի, որուն մանրամասնութիւնները քիչ թէ շատ ծանօթ են հետեւողներուն, մարդկութիւնը առաջին անգամ է որ ականատես կ'ըլլայ. պատերազմական կերպի, շարժումներու, կիրարկուած զէնքի ու միջոցներու նորութիւնը և գերազանցութիւնը նախընթաց շրջաններէն՝ աւելի կը մեծցնէ մեր երեւակայութեան մէջ գործուած նախնիքը ու տիեզերքը նաբակող հրդեհը անհամեմատելի չափեր կ'առնէ: Անշուշտ նոր աշխարհ մը պիտի ծնանի հինին մոխիրներու տակէն, ու այդ գաղափարն է դարձեալ որ կու գայ իբրեւ միջիջրարական երեւոյթ՝ մերք ընդ մերք փայլիլ մարդկային այս ցնցիչ տառապանքին վերեւ:

Տիեզերքի աներեւոյթ, հզօր ու միակ բացարձակ Վարիչը՝ գիտէ ամէն չարիքէ բարիք հանել. այս պատերազմէն ալ հաւանաբար պիտի բխի բարիք մը ու այդ բարիքը պիտի ըլլայ անտարակոյս բուժումը մարդկութեան մեծ վերքին: Ներկայ սերունդը իր արիւնով կը փաւէ հիններու սխալները՝ որոնցմով խմորուեցաւ հսկայ պատերազմը. ներկայ սերունդը իր եսին մէջ անհունապէս վիրաւորուած է արդար իրաւունքներու կոխտուումին համար. չփնտռեմք յանցապարտները, վերքը բացուած է ու կը վազէ արիւնը՝ պղտորելով փոխ-յաբաբերութիւնները ազգերու միջեւ: Մեր դարու հիւանդ մարդկութիւնը իր արիւնի հեղումով պիտի սրբուի վերանորոգուելու, վերակենդանանալու համար...:

Իսկ մենք հայերս համաշխարհային այս գալարումին մէջ, նիւթ դարձած մարդկութեան այս թոհրոհին մէջ, մեր ո՞ր մէկ յանցանքին համար պէտք է արիւն ֆրտինք մտնենք, մենք որ գոհերն ենք ուրիշներու անարդարութեան. ու արդար ըլլալու համար աւելցնենք նաեւ մեր միամիտ եւ անգիտակից քաղաքականութեան: Սակայն եւ այնպէս մեր արիւնն ալ կը վազէ այսօր. այլեւայլ նակատներու վրայ եւ մանաւանդ աղետալի Քերչի մէջ հնձուած հայ կորովի երիտասարդներու կորուստը դառն եւ ուժգին արձագանգ կու տայ մեր հոգիներէն ներս, ու պահ մը կը խորհիմք արդար իրաւունքով՝ թէ արդեօք յանուն մարդկութեան վերանորոգման մղուած այս պատերազմի աւարտին, այդ մեր քարմագեղ եւ քանկագին երիտասարդներու թափած արիւնէն պիտի ընծիւղի՞ն նոր նոր յոյսեր մեր քշուառ ու տառապակոծ հայրենիքին կատարեալ վերականգնումին համար: Մէն մի երիտասարդ՝ հայրենի օնախ մըն է մեզի համար որ կը մարի. մէն մի բազուկ որ կը փշրուի՝ շինարար ոյժն է որ կը պակսի մեր քաղցր հայրենիքի սահմաններէն ներս: Քիչ էին միթէ մեր ազգային ցաւերն ու սուգերը, դարաւոր մեր Աղէտին մէջ թափած արցունքները. իրաւանքն է որ հայ ընտանիք արդէն ունի բաւականաչափ իր ցաւերու պատմութիւնը՝

որ հատորներ կը լեցնէ եւ աչքեր կը ցամփեցնէ: Հայերու նակատագիրն եղած է կարծես ծառայել ուրիշին եւ նայիլ օտարի ձեռքին, անկեղծութեամբ գործածել ուրիշին կամ մարդկութեան բարիքին համար մեր ազնուատոհմ ու գեղեցկագէտ ցեղի յատկութիւնները, մարմնի կորովն ու քաղաքիւնները՝ ինչպէս մտքի բովանդակ գորութիւնը, մինչ անդին մայր հայրենիքը կարօտ ունի աշխատող Բազուկի եւ Տաղանդի: Նոյնը չէ՞ որ կը կրկնուի այսօր ալ անհուն գոհոգութիւններով եւ բազմադիմի կորուստներով...:

Պատերազմի մոլեգնութիւնները պիտի դադրին օր մը ու ազգեր պիտի գան դարձեալ փոքր փոքր յաղթուած եւ յաղթական, եւ կամ երկուքն ալ յաղթուած եւ երկուքն ալ յաղթական: Ու պիտի վերսկսի հին կեանքը: Մենք արդեօք ձեռնունմա՞յն պիտի մնանք այս անգամ ալ: Սակայն ամէն պարագային՝ ըլլանք կազմ ու պատրաստ, իմաստուն եւ խոհեմ, արքուն եւ քաղաքագէտ եւ ամէն բանէ աւելի համաձայն իրարու: Զկրկնենք հին սխալները...:

Մռայլ հորիզոնը երբ պարզուի, բարօրութիւնն ու երջանկութիւնը երբ տարածեն իրենց թելերը ժողովուրդներու վրայ, կեանքն ու աշխարհ ստանայ նոր հմայք մը՝ ունենանք մենք ալ մեր բաժինը արեւուն տակ՝ գոր պատմութիւնը, մեր իրաւունքները, մեր անցեալ փառքն ու Նախնիք՝ մեզի հրիտակած են:

Փութով ծագէր արշալոյսը այս փափաքուած նորոգ կեանքին, գար այն ցանկացուած օրը՝ երբ անթիւ դիակներու եւ արիւնի հեղեղով լացող դաշտին վրայ, ուր մահուան հոտը միայն կը տիրէ, նոր կեանքի մարդիկը խորշանքով մը այդ ամբողջ եղած աւերին առջեւ՝ դարձնեն աչքերնին դէպի Մայր Բնութեան անապականի գեղեցկութիւնները եւ ըսենք «ամէնքս ալ բարի Արարչի մը ստեղծուածներն ու գաւակներն ենք»:

Ահա այն ատեն է որ պիտի ըլլայ մարդկութիւնը մէկ ընտանիք եւ մէկ շահ ամէնուն, ինչպէս նաեւ մէկ՝ ասպարէզը գործունէութեան, ուր պիտի իջնեն ամէնքը արտադրելու գրական, գեղարուեստական ու գիտական նորանոր գործեր՝ ճշմարիտ ապացոյցը անոր զարգացման, քաղաքակրթութեան եւ առողջ կենսունակութեան: Այն ատեն պիտի տօնուի յաղթանակը հոգիի եւ իմացական ուժի՝ նիւթի եւ նիւթապաշտութեան դէմ:

Հ. Մ. Ճ.